

ք.եղեգնածոր

08.12.2017թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԶՈՎՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամները, համայնքապետեր:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Աշոտ Գալուստի Զաքարյանի /Զառիթափ/ բնակարանային գործի ուսումնասիրություն:
2. ՀՀ Վայոց ձորի մարզի 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի համապատասխանեցումը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին և հաշվառված անձանց ցուցակներին ներկայացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն :

Հանձնաժողովը որոշեց

1. Աշոտ Գալուստի Զաքարյանը հաշմանդամության կարգ չունի, հետևաբար չունի ԶՄՊՎ տեղեկանք և ՀՀ կառավարության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով շահառու չի կարող հանդիսանալ: Հիմք ընդունելով Զառիթափի համայնքի ղեկավարի 05.12.2017թ. N 228 գրությունը Աշոտ Գալուստի Զաքարյանի գործը հանել կարիքավորների ցուցակից:
2. Օրենքով սահմանված կարգով 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների կարիքավոր ընտանիքների ճշգրտված ցուցակները ներկայացնել ՀՀ ՊՆ :

Հանձնաժողովի նախագահ
Քարտուղար

Մ.Հարությունյան
Յ.Բաբայան

08.12.2017թ.